ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

N 102- Ա

21 մայիսի 2015 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ <<ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԳՅՈՒՂԻ ԱԱՊԿ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ներքին աուդիտի 2015թ տարեկան ծրագրին համապատասխան "Մեծ Մասրիկ գյուղի ԱԱՊԿ" փակ բաժնետիրական ընկերությունում ներքին աուդիտ անցկացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ հետևյալ կազմով՝

Ղուլոյան Հ. - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի վարիչ, աշխատանքային խմբի ղեկավար

Հայկազյան Ա. - մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ

Անհրաժեշտության դեպքում աշխատանքային խմբի մեջ ներգրավել համապատասխան մասնագետներ և փորձագետներ:

2. Աշխատանքային խմբին՝ իրականացված աուդիտի արդյունքները սահմանված ժամկետում ներկայացնել ներքին աուդիտի կոմիտեի քննարկմանը:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ